ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2021թ. № 243

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 228 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՎԱԼԵՐԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2004 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 228 որոշման կից ցուցակի մեջ Վալերիկ Վոլոդյայի Ստեփանյանի անունը սխալ է գրվել, հիմք ընդունելով անձնագրային տվյալները, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման ճշգրտված հաշվետվությունը և Վալերիկ Վոլոդյայի Ստեփանյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Փոփոխություն կատարել Սպիտակի քաղաքապետի 2004 թվականի նոյեմբերի 2-ի «Սպիտակ քաղաքի Տաշիր թաղամասի, Ոփյան և Այգեստան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 228 որոշման մեջ՝ կից ցուցակի 13-րդ տողում նշված «Վալեր» բառը փոխարինել «Վալերիկ» բառով:

2. Հաստատել Վալերիկ Վոլոդյայի Ստեփանյանին պատկանող՝ Սպիտակ համայնքի Չարենցի փողոցի վրա գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,041041 հեկտար մակերեսով:

3. Վալերիկ Վոլոդյայի Ստեփանյանին պատկանող՝ Սպիտակ համայնքի Չարենցի փողոցի վրա գտնվող 06-006-0130-0060 կադաստրային ծածկագրով 0,041041 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին և դրա վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Չարենցի փողոց, թիվ 35» հասցեն:

4. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 02
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«02» հունիսի 2021թ. № 244

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 207 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 26-ի թիվ 207 որոշման 2-րդ կետում «195 970» թվի փոխարեն սխալմամբ գրվել է «130 037»՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 26-ի «Մուրացան փողոցի վրա գտնվող բնակելի տան, բաց պատշգամբի և հողամասի նկատմամբ Գագիկ Գևորգի Դանիելյանի սեփականության իրավունքը վերականգնելու, 0,01605 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 207 որոշման 2-րդ կետում նշված «130 037» թիվը փոխարինել «195 970» թվով.

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ
«02» հունիսի 2021թ. № 245

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 156 ՈՐՈՇՈՒՄԸ, 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 31 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 280 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի նոյեմբերի 12-ի որոշման հիման վրա 2003 թվականի նոյեմբերի 21-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագրից ծագող իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով պետական գրանցում չի ստացել՝ ***որոշում եմ.***

1. ՈՒԺը կորցրած ճանաչել Սպիտակի քաղաքապետի 2003 թվականի նոյեմբերի 12-ի «Սպիտակ քաղաքի բնակիչ Գրիգոր Վոլոդյայի Նազարյանին փոքր տիպի ավտոտեխսպասարկման կայան կառուցելու համար հողամաս հատկացնելու մասին» թիվ 156 որոշումը:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Գրիգոր Նազարյանին տրված 2003 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 31 շինարարության թույլտվությունը:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Սպիտակի քաղաքապետի 2014 թվականի հոկտեմբերի 17-ի «Գրիգոր Նազարյանին հատկացված հողամասին հասցե տրամադրելու մասին» թիվ 280 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 2
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2021թ. № 246

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 52 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 14-ի թիվ 52 որոշման կից ցուցակում Խաչատուր Մկրտիչի Մարությանի անունը սխալմամբ գրվել է «Խաչիկ», հիմք ընդունելով Խաչատուր Մկրտիչի Մարությանի մահվան մասին պետական վկայականը և Խաչատուր Մկրտիչի Մարությանի ժառանգ Խաչատուր Հրաչյայի Մարությանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2006 թվականի ապրիլի 14-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Ն. Աճեմյան, Սայաթ-Նովա, Կնունյանց, Ալ. Մանուկյան, Մյասնիկյան, Կամոյի, Թումանյան, Քըրք Քըրքորյան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 52 որոշմանը կից ցուցակի 691-րդ տողում նշված «Խաչիկ» բառը փոխարինել «Խաչատուր» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2021թ. № 247

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, Սպիտակ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 69-Ն որոշման 8-րդ կետի 1-ին մասով՝ 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների թիվ 22/25 ընտրական տեղամասի համար տարածք վարձակալելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառական դասակարգման «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» տնտեսագիտական դասակարգման 4239 հոդվածով նախատեսված միջոցներից 50 000 ՀՀ դրամ տեղափոխել «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» գործառական դասակարգման «Գույքի և սարքավորումների վարձակալություն» տնտեսագիտական դասակարգման 4216 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 3
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2021թ. №248

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 84 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՇՈՏ ՄԻՔԱՅԵԼԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի թիվ 84 որոշմանը կից ցուցակում Աշոտ Միքայելի Դավթյանի հայրանունը սխալմամբ գրվել է «Մուխալի», հիմք ընդունելով, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131286 վկայականը, անձնագրային տվյալները և Աշոտ Միքայելի Դավթյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի մայիսի 26-ի «Սպիտակ քաղաքի Այգեստան, Շահումյան, Տեր Սիմոնյան, Մուրացան, Շիրակի խճուղի, Երևանյան խճուղի, Գործարանային փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 84 որոշմանը կից ցուցակի 278-րդ տողում նշված «Մուխալի» բառը փոխարինել «Միքայելի» բառով:

2. Աշոտ Միքայելի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06006 450-15 կադաստրային ծածկագրով 0,07 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 164» հասցեն:

3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 03
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2021թ. № 249

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 206 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Մարինե Ավետիսյանի դիմումը, «Հյուսիս-արևմտյան» թաղամասում լիազոր ներկայացուցչի կողմից տրված 2021 թվականի մայիսի 20-ի թիվ 263 տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 26-ի «Մարտուն Միքայելի Մակարյանի ընտանիքին պատկանող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 206 որոշման 1-ին կետում գրված «Մարինե Սլավիկի Ավետիսյանի (ծնված 12.04.1972թ.)» բառերից և թվերից հետո լրացնել «Լյուդմիլա Միքայելի Մակարյանի (ծնված 09.08.1970թ.)» բառերը և թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Վ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. հունիսի 3
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2021թ. № 250

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 205 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ***որոշում եմ.***

1. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի ապրիլի 26-ի «Շահումյան փողոցի վրա գտնվող բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շինությունների եվ հողամասի նկատմամբ Քաջևան Վահանի Սարոյանի սեփականության իրավունքը վերականգնելու, 0,00992 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու, ինքնակամ կառույցներն օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 205 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.հունիսի 3
ք.Սպիտակ